ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

N165
22 ապրիլի 2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետի փոխարինող,
մարզպետի տեղակալ պարոն Ա. Մեխակյանին

Մեծարգո պարոն Մեխակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 19-ի <<Համայնքի 2021 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> թիվ 44-Ա որոշումը:

Առդիր 57 /հիսունյոթ/ թերթ:

Համայնքի ղեկավար **Լ. Գրիգորյան**

Կատ.՝ Ա.Սաֆարյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10-08814-2021
23.04.2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2021 թվականի N44-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N42-Ն որոշման 2-րդ կետը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումը՝

1) 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4111 հոդվածով նախատեսված գումարից 320 000 ՀՀ դրամը ուղղել հետևյալ հոդվածներին՝

1.1) 260 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4215 հոդվածին.

1.2) 60 000 ՀՀ դրամն ուղղել 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4823 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի ապրիլի 19

ք. Մերձավան